# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 88

### ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, ՀայաստանիՀանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը, ինչպես նաև քաղաքացի Մասիս Բաղդասարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

Բավարարել քաղաքացի Մասիս Բաղդասարյանի դիմումը և նրան տրամադրել 1-ին փողոց թիվ 31/1 հասցեում կառուցված առևտրի սրահի և ապասարկման օբյեկտի շահագործման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Գասպարյան ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 89

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՋՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 16-ի N29-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. 2017թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 11.00-ին կազմակերպել հանրային լսումներ Նոր Երզնկա համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծի քննարկման վերաբերյալ:
2. Լսումներն անցկացնել Նոր Երզնկայի համայնքապետարանի շենքում, հասցեն՝ 2-րդ փողոց 33 շենք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 90

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

2017 թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 11.00-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1. Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2. <<Նոր Երզնկայի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Համայնքի ղեկավարի 2018 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
6. Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
7. Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 91

## ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի, <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Նոր Երզնկա համայնքում հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման գործառույթներ իրականացնելու համար լիազոր անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գրիգոր Մարդոյանին:
2. Վերոնշյալ լիազորությունների իրականացման համար համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 92

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N113-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Նոր Երզնկա համայնքի ղեկավարի 2007 թվականի փետրվարի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N113-Ա որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____ __
գ.Նոր Երզնկա